ՀՀ ԳԱԱ Տեղեկագիր, Գիտություններ Երկրի մասին, 2013, 66, № 1, 77-79

ՀԻՇԱՐԺԱՆ ՏԱՐԵԹՎԵՐ

Ռաֆիկ Խաչիկի Ղուկասյան
(ծննդյան 80-ամյակին)

Լրացավ վաստակաշատ գիտնական, Հայաստանում իզոտոպային երկրաբանության հիմնադիրներից մեկի՝ ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտի ավագ գիտաշխատող, երկրաբանա-մինեբալոգիական գիտությունների թեկնածու Ռաֆիկ Խաչիկի Ղուկասյանի ծննդյան 80-ամյակը:

Ռ. Ղուկասյանը ծնվել է 1933թ. փետրվարի 5-ին Երևանում: 1950-թ. արծաթե մեդալով ավարտել է Խ. Աբովյանի անվան միջնակարգ դպրոցը, 1956թ.՝ գերազանությամբ Երևանի պետական համալսարանի երկրաբանական ֆակուլտետի երկրաֆիզիկայի բաժանմունքը և աշխատանքի անցել Երկրաբանական գիտությունների ինստիտուտի Պետրոգրաֆիայի և մինեբալոգիայի բաժնում:

Այդ տարիներին, բաժնի վարիչ Գ.Բաղդասարյանի նախաձեռնությամբ, աշխատանքներ սկսվեցին երկրաբանական առաջացումների բացարձակ (իզոտոպային) ժամանակագրության լաբորատորիայի ստեղծման և համապատասխան կադրերի պատրաստման ուղղությամբ: Դա նոր, հեռանկարային ուղղություն էր, որը թույլ էր տալիս ֆիզիկական մեթոդների օգնությամբ լուծել մի շարք կարևոր երկրաբանական խնդիրներ, այդ թվում մագմատիկ և մետամորֆային առաջացումների հասակային հարցերը: Հարցեր, որոնց պարզաբանումը չափազանց կարևոր էր Հայաստանի տարածքի երկրաբանական զարգացման պատմության վերականգման համար:

Ռ.Ղուկասյանը 1957թ. ընդունվում է ասպիրանտուրա և գործուղվում Լենինգրադ (այժմ՝ Սանկտ-Պետերբուրգ) ՍՍՀՄ-ի ԳԱ Մինչքեմբրիի երկրաբանության լաբորատորիա, որտեղ, Լենինյան մրցանակի դափնեկիր, պրոֆ. Է.Գերլինգի ղեկավարությամբ, մասնագիտանում է իզոտոպային (K-Ar, Rb-Sr) ժամանակագրության բնագավառում: Առաջին իսկ տարիներից նա հանդես է եկել որպես չափազանց աշխատասեր, շնորհալի, արագ աճող հետազոտող ու փորձարար: Վերադառնալով Երևան՝ նա ջանք ու եռանդ չի խնայել լաբորատորիայում K-Ar, ապա Rb-Sr մեթոդների ներդրման համար, օգնել ու աջակցել է լաբորատորիայի մյուս աշխատակիցներին մասնագիտական մակարդակը կատարելագործելու ու բարձրացնելու գործում: 1968թ. Ռ.Ղուկասյանը պաշտպանել է իր թեկ-

նածուական ատենախոսությունը՝ «Մեղրու պլուտոնի ինտրուզիվների հասակային մասնատումն ըստ արգոնային մեթոդի տվյալների» թեմայով: Փոքր Կովկասի ամենախոշոր և իր կառուցվածքով բարդ Մեղրու պլուտոնի առանձին փուլերի հասակի վերաբերյալ այդ ժամանակ գոյություն ունեին տարբեր, հաճախ իրարամերժ կարծիքներ: Շնորհիվ Ռ.Ղուկասյանի աշխատանքի, որը հիմնված էր 250 նմուշների՝ այդ թվում միներալների, K-Ar և Rb-Sr հասակային որոշումների վրա, պարզվեց պլուտոնի առանձին համալիրների ձևավորման պատմությունը, որն ընդգրկում է վերին էոցենից մինչև ստորին միոցեն ժամանակահատվածը: Ռ.Ղուկասյանի անմիջական մասնակցությամբ որոշվել կամ ճշգրտվել են Հայաստանի բազմաթիվ մագմատիկ ու մետամորֆային համալիրների, գլխավոր արդյունաբերական հանքավայրերի իզոտոպային հասակները:

Նախկին ԽՍՀՄ-ում Հայաստանն այդ տեսանկյունից համարվում էր առավել մանրակրկիտ ուսումնասիրված տարածքներից մեկը, իսկ ԵԳԻ Բացարձակ հասակի լաբորատորիան դասվում էր երկրի ամենահեղինակավոր լաբորատորիաների շարքը, և Ռ.Ղուկասյանի դերն այդ գործում դժվար է գերագնահատել: Նա կատարել է ոչ միայն Հայաստանի, այլ նաև ԽՍՀՄ-ի, Սլովակիայի, Հունգարիայի, Ռումինիայի տարբեր շրջանների՝ Մեծ Կովկասի, Արևելյան Սիբիրի, Արևմտյան Պամիրի, Հարավային Գիսարի, Լեռնային Ղրիմի, Արևմտյան Կարպատների, Փոքր Կարպատների, ինչպես նաև Իսլանդիայի, Արևելյան Աֆրիկայի, Բայկալի ռիֆտերի մագմատիկ ու մետամորֆային գոյացումների երկրաժամանակագրական իզոտոպային հետազոտություններ, որոնց արդյունքում ստացվել են նոր, կարևոր տեղեկություններ նրանց ձևավորման հասակի ու պատմության վերաբերյալ:

ԽՍՀՄ-ի փլուզումից հետո, չնայած ստեղծված ծանր պայմաններին, Ռ.Ղուկասյանը նույն եռանդով ու պատասխանատվությամբ շարունակում է իր աշխատանքները: Բավական է նշել վերջին 10 տարիների ընթացքում ստացված Rb-Sr իզոտոպային հետազոտությունների որոշ կարևոր արդյունքները, որոնք վերաբերում են Արաբական վահանի և Հայկական բլոկի գրանիտոիդներին, Հայաստանի տրոնդյեմիտային ֆորմացիային, Հայաստանի նորագույն ռիոլիտներին, Մարցիգետի էոցենի մագմատիտների, Կողբ-Շնոխի ինտրուզիայի և Մեղրու պլուտոնի հասակային նոր մասնատմանը և այլն:

Ռ.Ղուկասյանն ավելի քան 55 տարի աշխատում է երկրաբանական համալիրների իզոտոպային ժամանակագրության բնագավառում և այդ ուղղության այսօրվա մեր գիտելիքները հիմնված են նրա հետազոտությունների արդյունքների վրա: Ռ.Ղուկասյանն այդ բնագավառի ճանաչված մասնագետ է, նա այսօր էլ մեծ հեղինակություն է վայելում Մոսկվայի ու Սանկտ-Պետերբուրգի իզոտոպային երկրաբանության մասնագետների շրջանում: Նա համահեղինակ է մեկ մենագրության, շուրջ 70 գիտական հոդվածների,

որոնք տպագրվել են Հայաստանում և համամիութենական հեղինակավոր ամսագրերում, 12 հոդված տպագրվել է արտերկրում (Չեխոսլովակիա, Մեծ Բրիտանիա, Հնդկաստան): Ռ.Ղուկասյանը բարձր կարգի պրոֆեսիոնալ է, բազմակողմանի զարգացած ու չափազանց համեստ և արժանիորեն վայելում է իր շրջապատի սերն ու հարգանքը:

Ի սրտե շնորհավորելով Ռ.Ղուկասյանին ծննդյան 80 ամյակի կապակցությամբ՝ մաղթում ենք նրան քաջառողջություն և բեղմնավոր աշխատանք:

ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտ
ՀՀ ԳԱԱ «Գիտություններ Երկրի մասին» տեղեկագրի խմբագրություն